

26.11.2018 19:04



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը **Ժնևի Հայաստան Հիմնադրամի (Շվեյցարիա)** աջակցությամբ իրականացնում է **«Անվճար իրավաբանական խորհրդատվություն» դրամաշնորհային ծրագիրը Տավուշի մարզում:**

**2018թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում Տավուշի մարզի Դիլիջան (դեկտեմբերի 18-ին), Իջևան (դեկտեմբերի 19-ին), Բերդ (դեկտեմբերի 20-ին) և Նոյեմբերյան (դեկտեմբերի 21-ին)**

**համայնքներում** քաղաքացիներին անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը **հայտարարում է փաստաբանների մրցույթ՝ Տավուշի մարզից (նշված համայնքներից) թվով 8 փաստաբաններ ընտրելու համար:** Նշված համայնքներից յուրաքանչյուրում իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար նախատեսվում է ներգրավել երկուական փաստաբան:

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող քաղաքացիաիրավական ուղղվածության փաստաբանները **Տավուշի մարզից:**

Նախապատվությունը կտրվի Պալատի նմանատիպ ծրագրերին նախկինում չմասնակցած, ինչպես նաև համապատասխան համայնքներում գործող փաստաբաններին:

Յուրաքանչյուր համայնքում անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար քաղաքացիների ընդունելությունը կկազմակերպվի դեկտեմբեր ամսվա ընթացքում վերը նշված ժամանակացույցին համապատասխան ընդամենը մեկ անգամ առավելագույնը 6 ժամ տևողությամբ:

Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր փաստաբան կմասնակցի քաղաքացիների մեկանգամյա ընդունելությանը համապատասխան համայնքում, որի համար ծրագրով նախատեսված ծառայության վճարը կազմում է **25.000 ՀՀ դրամ** (ներառյալ հարկերը և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ վճարները):

**Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում-հայտ (էլեկտրոնային**

**նամակ)՝ կցելով Ձեր ինքնակենսագրությունը (CV) անգլերեն և հայերեն լեզուներով՝ այն ուղարկելով [lyudvik.davtyan@gmail.com](mailto:lyudvik.davtyan@gmail.com) էլեկտրոնային հասցեին:**

**Դիմում-հայտերը և կից փաստաթղթերը չչ փաստաբանների պալատ կարող են ներկայացվել նաև փաստաթղթային եղանակով:**

**Դիմում-հայտի առարկայի տողում անհրաժեշտ է նշել այն համայնքը, որտեղ գործում է դիմող փաստաբանը:**

**Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2018 թվականի նոյեմբերի 30-ը:**

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել ծրագրի համակարգող փաստաբան Լյուդվիկ Դավթյանի հետ:

**Ծրագրի համակարգող՝**

**Լյուդվիկ Դավթյան**

Փաստաբան, իրավ. գիտ. թեկնածու

Հեռ.՝ +374 91 066 880

Էլ. փոստ՝ [lyudvik.davtyan@gmail.com](mailto:lyudvik.davtyan@gmail.com)